ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԱԲՆ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Հագուստի չորանոց 3 /18 կգ տարողությամբ /	Հագուստի չորանոց 3 /18 կգ տարողությամբ /	ՉԺՀ	18 կգ տարողությամբ էլեկտրական արդյունաբերական չորացման մեքենա Նոր, չօգտագործված, գործարանային արտադրության, առջևից բեռնվող, ավտոմատ կառավարմամբ արդյունաբերական թմբուկային չորացման մեքենա (industrial tumble dryer)՝ նախատեսված խնամքի, բուժական, հյուրանոցային և այլ մասնագիտական հաստատությունների ինտենսիվ շահագործման համար: Մատակարարվող սարքավորման տաքացման եղանակը պետք է լինի բացառապես էլեկտրական: Գնի մեջ ներառվում են սարքավորման մատակարարումը, բեռնաթափումը, տեղադրումը, էլեկտրական և օդատարի միացումները, գործարկումը, փորձարկումը, անձնակազմի ուսուցումը և երաշխիքային սպասարկումը: Սարքավորման անվանական չորացման բեռնատարողությունը պետք է

					կազմի առնվազն 18 կգ՝ չոր սպիտակեղենի հաշվարկով և արտադրողի պաշտոնական տեխնիկական տվյալների համաձայն։ Ընդունելի է 1:18 լցման հարաբերակցությամբ կամ արտադրողի կողմից փաստաթղթավորված համարժեք անվանական բեռնման պայմաններում հաստատված առնվազն 18 կգ տարողությունը։ Թմբուկի օգտակար ծավալը՝ առնվազն 330 լ։ Տաքացման եղանակը պետք է լինի բացառապես էլեկտրական, իսկ էլեկտրական տաքացման տեղադրված հզորությունը՝ առնվազն 18 կՎտ։ Գազային կամ միայն գոլորշային տաքացմամբ սարքավորումը չի ընդունվում։ Էլեկտրասնուցումը՝ եռաֆազ 380–415 Վ, 50 Հց՝ տեղադրման վայրի ցանցին համատեղելի կոմպլեկտավորմամբ և պաշտպանիչ հողանցմամբ։ Սարքավորումը պետք է ունենա էլեկտրոնային կամ միկրոպրոցեսորային կառավարման համակարգ՝ տեսանելի ցուցիչներով կամ էկրանով, չորացման ժամանակի և ջերմաստիճանի ծրագրային կառավարմամբ։ Չորացման ընթացքում պետք է ապահովվի թմբուկի հակադարձ պտույտ (reversing) կամ համարժեք հակախճճման գործառույթ։ Եթե հակադարձ պտույտը կամ հակախճճման գործառույթը արտադրողի կողմից ընտրովի է, այն պետք է ներառված լինի մատակարարվող կոմպլեկտում։ Չորացման ավարտին պետք է իրականացվի տաքացման անջատում և վերահսկվող սառեցման փուլ (cool-down)։ Սարքավորումը պետք է ունենա օդի հարկադրական արտածման համակարգ և արտադրողի նախատեսած օդատարի միացման ելք՝ առնվազն 160 մմ տրամագծով։

					Չորացման մեքենան պետք է ունենա սպիտակեղենից անջատվող բմբուլի, թելիկների և փոշու հավաքման ֆիլտր, որը պետք է լինի հեշտ հասանելի և ապահովի պարբերական մաքրման հնարավորություն՝ առանց սարքավորման հիմնական կառուցվածքային հանգույցների ապամոնտաժման: Սարքավորման ներքին թմբուկը պետք է պատրաստված լինի չժանգոտվող պողպատից կամ արտադրողի փաստաթղթավորված կոռոզիակայուն արդյունաբերական համարժեք նյութից: Թմբուկի ներքին մակերեսը պետք է լինի հարթ, առանց գործվածքները վնասող սուր եզրերի: Դուռը պետք է ունենա անվտանգ փակվածքի վերահսկման համակարգ, որը բացառում է բաց դռնով գործարկումը և աշխատանքի ընթացքում դուռը բացելու դեպքում ապահովում է թմբուկի պտույտի ու տաքացման անվտանգ դադարեցումը: Սարքավորումը պետք է ունենա օդի արտածման կամ հոսքի վտանգավոր խանգարման և գերտաքացման կանխարգելման գործարանային պաշտպանություններ, սխալների ախտորոշման կամ ազդանշանման հնարավորություն: Սարքավորման արտաքին եզրաչափերը (լայնություն × խորություն × բարձրություն) պետք է լինեն ոչ ավելի, քան 1100 × 1450 × 2100 մմ: Սարքավորումը պետք է լինի գործարանային սերիական համարով և արտադրության տարեթվի նշմամբ: Սարքավորման աշխատանքային ծրագրերը պետք է ապահովեն ջերմաստիճանի վերահսկում, գործվածքների գերտաքացման կանխարգելում, էլեկտրական

					տաքացուցիչների և շարժիչի գործարանային պաշտպանություն, արտակարգ կամ անմիջական անվտանգ կանգի հնարավորություն, ինչպես նաև էլեկտրամատակարարման ընդհատման դեպքում անվտանգ աշխատանքային վիճակ: Սպասարկման ենթակա հիմնական հանգույցները պետք է հասանելի լինեն արտադրողի տեխնիկական ցուցումներին համապատասխան: Մասնակիցը պետք է ներկայացնի առաջարկվող սարքավորման արտադրողի անվանումը, արտադրության երկիրը, ճշգրիտ մոդելը, կոմպլեկտավորումը, էլեկտրական տաքացման անվանական հզորությունը, տեղադրման տեխնիկական պահանջները, փաստացի եզրաչափերը, քաշը, ընդհանուր տեղադրված էլեկտրական հզորությունը, պաշտպանիչ ավտոմատի, էլեկտրական միացման, օդատարի տրամագծի և օդափոխության պահանջների տվյալները: Մասնակիցը պարտավոր է ներկայացնել արտադրողի կողմից տրված լիազորագիր (Manufacturer’s Authorization Form՝ MAF) կամ արտադրողի պաշտոնական դիստրիբյուտորի կամ դիլերի կողմից տրված լիազորագիր (Distributor/Dealer Authorization Form՝ DAF), որով կհաստատվի մասնակցի իրավասությունը՝ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում առաջարկելու և մատակարարելու նշված ապրանքանիշի ու մոդելի սարքավորումը: DAF ներկայացնելու դեպքում պետք է նաև փաստաթղթերով հաստատվի լիազորագիր տրամադրողի՝ արտադրողի կողմից համապատասխան լիազորություն ունենալու հանգամանքը: Լիազորագիրը պետք է պարունակի

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲԸ-ԷԱՃԱՊՁԲ-26/74 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3				
				առաջարկվող սարքավորման արտադրողի, ապրանքանիշի և մոդելի տվյալները, ինչպես նաև հաստատի սարքավորման երաշխիքային սպասարկման և անհրաժեշտ պահեստամասերի տրամադրման պայմանները: Մատակարարը պատասխանատու է պայմանագրով նախատեսված տեխնիկական և երաշխիքային սպասարկման պատշաճ կատարման համար: Մինչև տեղադրումը մատակարարը պատվիրատուի մասնակցությամբ պետք է ստուգի տեղադրման վայրի եռաֆազ էլեկտրամատակարարման փաստացի հասանելի հզորությունը, պաշտպանիչ ավտոմատի և մալուխի պահանջները, սենյակի ներհոսքային օդի ապահովումը և օդատարի համապատասխանությունը: Մատակարարը պարտավոր է իրականացնել մեքենայի բեռնաթափումը, տեղադրումը, հարթեցումը, անհրաժեշտության դեպքում ամրացումը, պաշտպանիչ հողանցումը, էլեկտրական միացումը և արտադրողի պահանջներին համապատասխան օդատարի միացումը՝ անհրաժեշտ բոլոր կցամասերով: Բոլոր աշխատանքներն ու միացման պարագաները պետք է ներառված լինեն առաջարկի ընդհանուր գնի մեջ: Տեղադրումից հետո պետք է իրականացվի առնվազն մեկ ամբողջական չորացման ցիկլ՝ դատարկ և աշխատանքային բեռնվածքով, ներառյալ ջերմաստիճանի, տաքացման, հակադարձ պտույտի, սառեցման, օդի արտածման և անվտանգության համակարգերի ստուգումը: Մատակարարը պարտավոր է ապահովել պատվիրատուի առնվազն երկու աշխատակցի

					գործնական ուսուցումը և կազմել տեղադրման, փորձարկման, գործարկման և հանձնման-ընդունման համապատասխան ակտերը: Սարքավորման ամբողջական երաշխիքային ժամկետը պետք է կազմի առնվազն 12 ամիս՝ շահագործման հանձնման ակտի ստորագրման օրվանից: Երաշխիքով ընդգրկված անսարքությունների վերացման համար անհրաժեշտ աշխատանքի, պահեստամասերի և մասնագետի այցի ծախսերը կրում է մատակարարը: Խափանման մասին հաղորդման ընդունումը պետք է հաստատվի առավելագույնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, իսկ անհրաժեշտության դեպքում մասնագետի այցը պետք է կազմակերպվի առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարը պարտավոր է ՀՀ տարածքում կազմակերպել սարքավորման տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը և անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերումը՝ սեփական կամ պայմանագրային սպասարկման ռեսուրսներով: Պայմանագրով պետք է սահմանվեն վերանորոգման ժամկետները, սարքավորման չաշխատած ժամանակով երաշխիքային ժամկետի երկարաձգումը և կրկնվող էական անսարքությունների կարգավորման պայմանները: Սարքավորման հետ պետք է տրամադրվեն շահագործման հիմնական ցուցումները՝ հայերեն, ռուսերեն կամ անգլերեն, արտադրողի տեղադրման և տեխնիկական սպասարկման ձեռնարկները, էլեկտրական սխեման, օդատարի միացման և սենյակի օդափոխության պահանջները՝ հայերեն, ռուսերեն կամ

				անգլերեն, ինչպես նաև երաշխիքային և կիրառելի համապատասխանության փաստաթղթերը։ Սարքավորման ընդունումն իրականացվում է մատակարարված մոդելի, սերիական համարի, կոմպլեկտավորման, տեխնիկական ցուցանիշների և ամբողջական գործնական փորձարկման արդյունքների հիման վրա։